

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

## Ապրանքի ծագման տեղանուններ

Գրանցման համար	8.1
Հայտի համար	2014003
Հայտի ներկայացման թվականը	29.05.2014
Ծագման երկիրը	GE
Գործողության երկարաձգման թվական	10.07.2034
Երկարաձգված գործողության ավարտ	29.05.2034
Հրատարակող տեղանունը	KINDZMARAULI, ԿԻՆԶՄԱՐԱՈՒԼԻ, КИНДЗМАРАУЛИ
ԱԾՄԴ-ի դասը	33

ქინძმარაული

Ապրանքի տեսակը կամ կոնկրետ ապրանքը գինի

Ապրանքի հատուկ որակի նկարագրությունը՝

«Կինձմարաուլի» բարձր որակի բնական կիսաքաղցր կարմիր գինի տեղանվան ծագման անունով: Գինին պատրաստվում է Սապերավի տեսակի խաղողից:

«Կինձմարաուլի» գինին բնութագրվում է մուգ նոնագույն երանգով, իսկ համը՝ ներդաշնակ, հազեցած, թավշյա, նուրբ, հաճելի քաղցր, մրգային տոներով և տեսակային բույրով:

«Կինձմարաուլի» գինու քիմիական տվյալները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝

սպիրտի ծավալային պարունակությունը՝ 10,5-12,0%

շաքարի զանգվածային խտությունը՝ 30-50 գ/դմ<sup>3</sup>

տիտրվող թթվությունը՝ 5-7գ/դմ<sup>3</sup>

ցնդող թթուներ՝ 1,2 գ/դմ<sup>3</sup>

էքստրակտի զանգվածի բերված խտությունը՝ 20 գ/դմ<sup>3</sup> ոչ պակաս

ընդհանուր ծծմբի երկօքսիդի զանգվածային խտությունը՝ 210 մգ/դմ<sup>3</sup> ոչ ավել

ազատ ծծմբի երկօքսիդի խտությունը՝ 30 մգ/դմ<sup>3</sup> ոչ ավել:

**Կապն աշխարհագրական ծագման հետ՝**

Միկրոկլիման պայմանավորված լեռնաշղթայի ազդեցությունով, որը հարավից հարում է Կավկասիոնի բարձր սարերին և քարավազային հողեր, որոնք ձևավորել են գետերի բերած սև թերթաքարերից (сланец): Էկոլոգիական ճկունությունը ստեղծում է քիչ թե շատ բարենպաստ պայմաններ խաղողի այգիների համար, ինչպես նաև տալիս է յուրահատուկ որակ Սապերավի տեսակի խաղողի վազին: Այս ամենն ապահովում է յուրահատուկ, բարձրակարգ, բնականից կիսաքաղցր «Կինձմարաուլի» գինու յուրահատուկ համը:

**Աշխարհագրական գոտին՝** «Կինձմարաուլի» խաղողագործության հատուկ գոտին գտնվում է Արևելյան Վրաստանում, Շիդա Կախեթիում, Կվարելի վարչական շրջանում, Կավկասիոնի լեռնաշղթայի հարավային լանջին, 41°30' հյուսիսային լայնության և 45°50' արևելյան երկարության կոորդինատներով: Արդյունաբերական խաղողագործության այգիները հիմնականում տեղակայված են ծովի մակերևույթից 250-550մ բարձր, Ալազանի գետի ձախ ափին (շրջան): Ցածրավայրի հիմքը կազմում է Ալազանի գետահովիտը, որը հյուսիսում բարձրանում է, վերածվելով նախալեռան և միանում Կավկասիոնի հիմքին: